



Հրանտ Մաթևոսյան

Ահա Չահրատը

Սա Թումանյանն է.

Դու մի անհայտ Բանաստեղծ ես, չտեսնելված մինչ Էսոր,

Առանց խոսքի երգ ես թափում հայացքներով լուսավոր:

Ես էլ, ասենք, զարմանալի Ընթերցող եմ բախտավոր,

Որ կարդում եմ Էդ երգերը Էսքան հեշտ ու Էսքան խոր:

Իսկ այս ահա Թումանյանը չէ - Չահրատն է.

Բանաստեղծին հետ միատեղ ճամբայ կ'ելլենք երգելու

Ինքը կ'երգէ - մենք երգելու պէս կ'ընենք...

Բանաստեղծներս իհարկե աստվածային հնչումի ձայնագրիչը, աստվածային տեքստի ընթերցողը, աստվածային գրի՝ որ է ամբողջ աշխարհը՝ վերծանողն ենք, և հարկ էր, որ Աստծո տեքստի թումանյանական ընթերցումը ունենար իր տարրընթերցումը՝ նվազ ոգեշունչ, նվազ բարձրից ու երկնային, առավել երկրային, և այդ տարրընթերցումը իր ասացողին գտնելու էր իհարկե արևմտահայերենում ու Պոլիս, ուր իշխանական մեր բարձր քիթը լավագույնս էր տրորվել:

Այս երկնքի տակ ազգովին որևէ նշանակելի ներկայություն լինելու

գայթակղությունից այլևս թոթափված, սեփական որևէ երկրի ու տերության և կամ որևէ առաքելության գործությամբ չդրոշմված և այդքանով բաց երկնքի տակ նյարդերը մերկ և այդքանով աչքերն ու ունկերը մաքուր՝ իհարկե Հայ գրականության Պոլսո մեր որդին էր երկիրը մրջնանոց և մեզ անանուն մրջյուններ տեսնելու, իհարկե Չահրատն էր լինելու արարածի մեր շուկն ու լուռ վարքը, մեր գրականությունն իհարկե նրանով էր ներկայելու փոքր ու մեծ մարդուն, փոքր մեծ մարդը մեզանում սիրելի էր լինելու Չահրատով: Ո՛չ Չարենցով, ո՛չ Սևակով, ո՛չ մերագնյա կամ այլազգի ուրիշ որևէ մեկով - միայն Չահրատով:

Հիանալի է, որ Հայ գրականության դադրած ու դադարած սիրտը, Պոլիս,
շարունակեց բաբախել Չահրատի ջերմ շնչի ներքո, հիանալի է, որ Հայոց լեզուն
նորօրյա բանաստեղծության անդաստանում չպապանձվեց - խոսեց,
հասկանալի ու սիրելի եղավ Չահրատով: